Հավելված
ՀՀ վարչապետի 2011 թ.
հուլիսի 14 -ի N 660 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման պատասխա-նատուները	Կատարման ժամկետը
1.	«ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետու-թյան տարածքից ավտոմոբիլա-յին տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման մեջ փոփո-խություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկա-յացնելը	1. Մրցութային հանձնաժողովին վերապահված՝ երթուղիների ցանկի նախապատրաստման և մրցույթների մասին տեղեկատվության հրապարակման գործառույթների փոխանցում նախարարության աշխատակազմին: 2. Մրցույթին ներկայացվող անհրաժեշտ փաս-տաթղթերի ցանկի լրամշակում՝ միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացմանը ներկայացվող հիմնական պահանջներին համապատասխան՝ ներառելով նաև տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության արատորոշման քարտի ներկայացման պահանջը: 3. Հայտերի ուսումնասիրության փուլում փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու դեպքում հետագա քայլերի սահմանում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ

		4. Հանձնաժողովի կողմից տեղում ավտոբուսների անսարքությունների ստուգման պահանջի վերացում: 5. Ավտոբուսների գնահատման սանդղակի յուրաքանչյուր միավորի համար պարտադիր պահանջների և չափանիշների սահմանում: 6. Մրցույթի առաջին փուլում ընտրված կազմակերպությունների փոխադրավարձի գնային առաջարկի՝ որպես հետագա ընտրության առաջնահերթ չափանիշի սահմանում: 7. Հայտերի՝ նախարարություն մուտքագրվելու դրույթի սահմանում և դրա հետ կապված հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերի լրամշակում:		
2.	«ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» N 762 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1. Մրցութային հանձնաժողովին վերապահված՝ մրցույթների մասին տեղեկատվության հրապարակման գործառույթի փոխանցում նախարարության աշխատակազմին: 2. Հանձնաժողովի անդամներին մրցույթների անցկացման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ տեղեկացման ժամկետի սահմանում: 3. Հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում ավտոբուսների տեխնիկական զննության արատորոշման քարտի ներառում: 4. Հանձնաժողովի կողմից ավտոբուսների տեղում անսարքությունների ստուգման պահանջի վերացում: 5. Հայտն ընդունելու մասին մրցութային հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և կնիքով հավաստման մասին դրույթի վերացում: 6. Հանձնաժողովի հատուկ նիստի անցկացման ժամկետի հստակեցում: 7. Ավտոբուսների գնահատման սանդղակի յուրաքանչյուր միավորի համար պարտադիր պահանջների և չափանիշների սահմանում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ

3.	«ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախականությունների կառավարման համակարգող հանձնաժողովի հանդիպումների և քննարկումների (աշխատանքի) կարգը հաստատելու մասին» N 992-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1. Ռադիոհաճախականությունների որոշակի հատվածների առանձնացման վերաբերյալ պետական մարմինների հայտերի քննարկման գործընթացի նկարագրություն՝ սահմանելով ժամկետները, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մերժման հիմքերը և այլն: 2. Կարգի 13-րդ կետի ուժը կորցրած ճանաչում և կարգում՝ հանձնաժողովի նիստերի նախապատրաստման, նիստերին հարցերի ուսումնասիրման, արձանագրությունների վարման, ընդունված որոշումների ձևակերպման կարգի, հանձնաժողովի նախագահի, անդամների, քարտուղարի գործառույթների սահմանում: 3. Միայն ըստ անհրաժեշտության նիստեր հրավիրելու պահանջի սահմանում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ
4.	«ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2004 թվականի մարտի 30-ի «Ուղևորատար տրանսպորտով առանձին խմբերի քաղաքացիների երթևեկության արտոնությունների իրավունքը հաստատող վկայականների ձևը և դրանց տալու կարգը հաստատելու մասին» N 77-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	1. Վկայականների վավերացման իրավասու պաշտոնյայի նշում: 2. Մարզերում բնակվող առանձին քաղաքացիներին ուղևորատար տրանսպորտով անվճար երթևեկության վկայականների տրամադրման գործընթացի կանոնակարգում: 3. Քաղաքացուց առաջին անգամ վկայական ստանալու համար իր վկայականի արժեքի գանձման վերացում: 4. Քաղաքացու անձնագրում վկայականի համարի գրանցման մասին ՀՀ օրենսդրությանը հակասող պահանջի վերացում: 5. Վկայականի կորստի դեպքում նոր վկայականի տրամադրում ընդհանուր հիմունքներով՝ առանց ՋԼՄ-ներում հայտարարություն տալու և 45 օր սպասելու:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ

		6. Վկայականների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանի ձևի և վարման ընթացակարգի սահմանում:		
5.	«Փոստային վճարման պետա-կան նշանների հաստատման գործընթացը կազմակերպելու, փոստային վճարման պետա-կան նշանների հարցերով խորհրդի աշխատակարգն ու խորհրդի կազմը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	1. Փոստային վճարման պետական նշանների հարցերով խորհրդի կազմի և խորհրդի աշխատակարգի հաստատում՝ հստակեցնելով խորհրդի խնդիրները և իրավասությունները, հարցերի քննարկման և եզրակացությունների տրամադրման ժամկետները: 2. Հրամանում ներառել նախարարության կողմից խորհրդի աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև խորհրդի կողմից ընդունված որոշումների վավերացման վերաբերյալ դրույթներ:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ
6.	«ՀՀ կառավարության 2007 թվա-կանի փետրվարի 15-ի «Հայաս-տանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության անցկացման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 690-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը	1. Մրցույթի և ժամկետների մասին դրույթների համապատասխանեցում օրենքի պահանջներին: 2. Լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների լրամշակում՝ սույն կետում առաջարկվող մյուս փոփոխություններին համապատասխան, ինչպես նաև այնպիսի պայմանների և պահանջների սահմանում, որոնք հնարավոր է հաստատել հայտի հետ ներկայացվող փաստաթղթերով: 3. Հայտի մերժման հիմքերի սահմանում, լիցենզիա ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի լրամշակում՝ լիցենզավորման պայմաններին, պահանջներին և հայտերի մերժման հիմքերին համապատասխան (նաև բոնուսի և բանկային երաշխիքի պահանջների վերացում): 4. Լիցենզիայի ստորագրման իրավունքի վերապահում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ
7.	«ՀՀ կառավարության 2007 թվա-	1. Լիցենզավորման պարտադիր պայմանների և	ՀՀ տրանսպորտի և կապի	2011 թ. հուլիսի 3-րդ

	կանի հունիսի 21-ի «Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 819-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	պահանջների հստակեցում, այդ թվում՝ տրանսպորտային միջոցների համար տեխնիկական պայմանների ու պահանջների սահմանում և այլն: 2. Լիցենզիայի և ներդիրի հայտերի մերժման հիմքերի, լիցենզիա և ներդիր ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի սահմանում: 3. Լիցենզիայի տրամադրում՝ ներդիրի (ներդիրների) հետ միասին, ներդիրի ձևի և նոր ներդիր տրամադրելու (ներդիրի ուժը կորցրած ճանաչելու, դրանում փոփոխություն կատարելու) ընթացակարգի սահմանում: 4. Լիցենզիայի և ներդիրի ստորագրման իրավունքի վերապահում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:	նախարարություն	տասնօրյակ
8.	«ՀՀ կառավարության 2007 թվա-կանի մարտի 22-ի « Հայաստանի Հանրապետությունում մարդա-տար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավոր-ման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 655-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառա-վարություն ներկայացնելը	1. Լիցենզիայի և ներդիրի հայտերի մերժման հիմքերի, լիցենզիա և ներդիր ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի սահմանում, ժամկետների համապատաս-խանեցում օրենքի պահանջներին: 2. Լիցենզիայի տրամադրում՝ ներդիրի (ներդիրների) հետ միասին, ներդիրի ձևի և նոր ներդիր տրամադրելու (ներդիրի ուժը կորցրած ճանաչելու, դրանում փոփոխություն կատարելու) ընթացակարգի սահմանում: 3. Պայմանների ու պահանջների համապատասխանության՝ միայն փաստաթղթային ուսումնասիրություն: 4. Լիցենզիայի և ներդիրի ստորագրման վերա-պահում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին: 5. Հավաքակայանների վերաբերյալ ռեգիստրի ստեղծում: 6. Դեղին համարանիշ ստանալու գործընթացի	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ

		ժամկետների սահմանում, ներդիրի բնօրինակը հանձնելուց հետո դեղին համարանիշների անօրինական օգտագործման կանխում: 7. Այլ դրույթների լրամշակում, այդ թվում՝ լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների սահմանում մեկ ընդհանուր բաժնում և այլն:		
9.	«ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 1044-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1. Լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների, լիցենզիայի հայտի մերժման հիմքերի սահմանում, ինչպես նաև դրանց համապատասխան՝ լիցենզիա ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի լրամշակում: 2. Հայտի ձևի հաստատում: 3. Լիցենզիայի ստորագրման իրավունքի վերապահում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին: 4. Անճշտությունների վերացում (կետեր 11, 13, 17):	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ
10.	«ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 1113-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն	1. Լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների հստակեցում, օրինակ՝ սահմանելով տեխնիկական միջոցների և մասնագիտական որակավորման պայմաններ և պահանջներ և այլն: 2. Հայտի մերժման հիմքերի սահմանում, ինչպես նաև դրանց համապատասխան՝ լիցենզիա ստանալու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի լրամշակում: 3. Հայտի ձևի հաստատում: 4. Լիցենզիայի ստորագրման իրավունքի վերապահում հապատասխան ստորաբաժանման ղեկավարին:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ

	ներկայացնելը			
11.	«Տրանսպորտի բնագավառի լիցենզավորող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	Տրանսպորտի բնագավառի լիցենզիաների համար ստեղծված 3 լիցենզավորող հանձնաժողովների լուծարում և մեկ ընդհանուր՝ տրանսպորտի բնագավառի լիցենզավորող հանձնաժողովի անհատական կազմի հաստատում, ինչի արդյունքում նախարարությունը կունենա 2 լիցենզավորող հանձնաժողովներ՝ տրանսպորտի բնագավառի և փոստային բնագավառի համար:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ
12.	«ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2007 թվականի հուլիսի 6-ի N 160-Ն ու 2005 թվականի հուլիսի 28-ի N 237-Ն հրամաններում փոփոխություն-ներ և լրացումներ կատարելու և 2003 թվականի հոկտեմբերի 20-ի N 321-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»	1. Լիցենզավորող հանձնաժողովների 4 կանոնադրությունների փոխարեն՝ 2 հանձնաժողովների կանոնադրությունների հաստատում: 2. Հանձնաժողովի եզրակացության ձևի սահմանում: 3. Ըստ անհրաժեշտության նիստեր հրավիրելու դրույթի սահմանում: 4. Օրենքի պահանջների կատարումն ապա-	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ

	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	հովելու համար քարտուղարի գործառույթների լրացում (եզրակացության տրամադրում կամ նիստի ավարտից հետո պատշաճ ձևով ուղարկում հրավիրված անձին և այլն):		
13.	«ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի տեղադրման կարգը հաստատելու մասին» N 765-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1. Ճանապարհներին գովազդային վահանակների տեղադրման համար հնարավոր վայրերի առանձնացում (գույքագրում) և սահմանում: 2. Թույլտվությունների տրամադրում որոշակի ժամկետով և նախապես սահմանված վայրերի համար՝ առանց դիմումը ՀՀ ոստիկանության հետ համաձայնեցնելու և տեղում զննում կատարելու: 3. Թույլտվության ձևակերպում պայմանագրով, պայմանագրի օրինակելի ձևի սահմանում: 4. Թույլտվություն ստանալուց հետո վահանակի տեղադրման աշխատանքներն ավարտելու համար առավելագույն ժամկետի, վահանակի պահպանման պահանջների, ապամոնտաժման հարաբերությունների կարգավորման մասին դրույթների սահմանում: 5. Գովազդ տեղադրելու պարտադիր պահանջի և վահանակի տեղադրումից հետո գովազդ տեղադրելու համար առավելագույն ժամկետի սահմանում: 6. Պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում թույլտվության դադարեցում: 7. Նախկինում տրամադրված անժամկետ թույլտվությունների վերաձևակերպում: 8. Թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյան վարելու պահանջի	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ

		սահմանում:		
14.	«Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդային վահանակների տեղադրման համար տրամադրված թույլտվությունների մասին էլեկտրոնային գրանցամատյանի օրինակելի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	Տրամադրված թույլտվությունների մասին էլեկտրոնային գրանցամատյանի ներդրում և վարման կանոնակարգում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ
15.	«ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի «Հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2006 թվականի հունիսի 28-ի N 172-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 624-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	Գովազդի թույլտվության տրամադրման համար ստեղծված հանձնաժողովի լուծարում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ
16.	«Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմում համակարգչային տեխնիկայի սպասարկման	Համակարգչային տեխնիկայի, կապի միջոցների, սպասարկման կանոնակարգում: Համակարգչային տեխնիկայի տեխնիկական անսարքությունների վերացման ընթացակարգի սահմանում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ

	կարգը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում			
17.	«Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և շահագործման կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	Նախարարությանը տրամադրված ծառայողական ավտոմեքենաների բաշխման, շահագործման, ընթացիկ նորոգման և պահպանման հարցերի կանոնակարգում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ
18.	«Տրանսպորտի, փոստի, կապի, տեղեկատվայնացման և ճանապարհաշինական բնագավառներին վերաբերող վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վիճակագրական ռեգիստրների վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	1. Վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրում՝ ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի «Վարչական(տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» N 109 որոշմամբ: 2. Հաշվետվությունների ձևերի հաստատում՝ ըստ տրանսպորտի և կապի առանձին բնագավառների հավաքագրման ենթակա համապատասխան ցուցանիշներով և ժամանակահատվածով: 3. Տեղեկությունների հավաքագրման, շտեմարանների ստեղծման և վարման գործընթացի իրականացման հաջորդական քայլերի ժամկետների և պատասխանատուների սահմանում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ

19.	«Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հրամանի մշակում և հաստատում	Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կառուցվածքի և սպասարկման հարցերի կանոնակարգում, գործընթացի հաջորդական քայլերի իրականացման ժամկետների և պատասխանատուների սահմանում:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 2-րդ տասնօրյակ
20.	«ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1809-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	1. Կանոնադրությամբ ամրագրված գործառույթների անհարկի կրկնությունների բացառում: 2. Ուժը կորցրած ճանաչել կանոնադրության 8-րդ կետի «ժդ» և «ժը» ենթակետերը:	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ
21.	«ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1810-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա տեղադրված գովազդային վահանակների՝ սահմանված պահանջներին համապատասխան պահպանման, ինչպես նաև տեղադրված գովազդի՝ գովազդի մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության գործառույթների սահմանում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2011 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ